ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐԻ 2015 թ.

Որակյալ կրթության և հանրային ծառայությունների իրականացումը ԳՊՄԻ–ի հիմնական ռազմավարական նպատակներից է, որին հասնելու բանալիներից մեկն էլ որակի ապահովման ներքին գործուն համակարգ ունենալն է: Այս ուղղությամբ մեր բուհի առաջին փորձառությունը վերաբերել է 2011թ.-ին, երբ հիմնվեց կառուցվածքային նոր միավոր՝ Որակի ապահովման և վերահսկման կենտրոն, որն այս տարիների ընթացքում ենթարկվեց թե՛ կառուցվածքային, թե՛ գործունեության բովանդակային բարելավումների: Այսօր կարող ենք վստահաբար արձանագրել, որ ԳՊՄԻ-ի որակի ապահովման կենտրոնը կայացել է և հաստաքայլ գնում է բուհի կողմից նախանշված ճանապարհով՝ նպաստելով որակի մշակույթի ձևավորման և արմատավորման դժվարին գործընթացի իրականացմանը: Անցած երկու տարին ինչպես ամբողջ բուհի, այնպես էլ այս կառույցի համար առավել քան պատասխանատու էր՝ պայմանավորված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի պահանջներով: ԳՊՄԻ պատմության մեջ այս էջը ամրագրվելու է որպես հավաստման փուլ, որ մեր բուհի կողմից իրականացվող մասնագիտական կրթության որակը ճանաչելի է պետության կողմից: Այս համատեքստում ՈԱԿ-ի հիմնական նպատակն էր իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատում և վերլուծություն՝ հընթացս ստեղծելով և կիրառելով որակի գնահատման պլանավորված որակական և քանակական գործիքներ, ինչպես օրինակ՝ գնահատման հարցաթերթիկներ /թվով՝ 9/, դրանց վերլուծության տարրերին համապատասխան դիագրամներ, ՈՒԹՀՎ/SWOT վերլուծություն, կատարողականի գնահատման ցուցիչներ, գրաֆիկներ և այլն: ՈԱԿ-ի հիմնական խնդիրն էր ապահովել բուհի հաշվետվողականությունը ներքին և մասնավորապես արտաքին շահակիցների

առջև: Գրանցելով այս փուլի համար լուրջ ձեռքբերումներ, սակայն, չենք կարող կանգ առնել, որովհետև ակնհայտ է, որ դեռևս առկա են կազմակերպչական, կանոնակարգային, ընթացակարգային, մեթոդաբանական մի շարք խնդիրներ, որոնցից ըստ հրատապության և կարևորության առանձնացվել են հետևյալները.

- **ՈԱ ընթացակարգային փաթեթի ստեղծումը՝** նկատի ունենալով հայաստանյան և միջազգային բուհերի փորձը: Փաթեթն իր մեջ ներառելու է՝

1. Կրթական ծրագրերի ՈԱ
2. Ուսումնառության ՈԱ
3. ՊԴ կազմի ՈԱ
4. Գիտահետազոտական գործունեության ՈԱ
5. Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ՈԱ
6. Հանրային ներգրավման ՈԱ:

Փաստաթղթի առկայությունը կապահովի որակի ապահովման գործընթացների կայունությունը, ձեռքբերումների անշրջելիությունը և իհարկե արդյունավետությունը: Փաթեթի ստեղծման առումով կարելի է հիմնվել Պորտուգալիայի Լիերայի պոլիտեխնիկական ինստիտուտի փորձի վրա, մասնավորապես կրթական ծրագրերի մշտադիտարկման, գնահատման, վերանայման և բարելավման առնչությամբ: Այս բուհում ԿԾ-ի իրականացման պատասխանատուն ամբիոնի վարիչ/ծրագիր համակարգողն է, ով պատրաստում է տարեկան զեկույց ուսումնական ծրագրի, դրա առանձին դասընթացների իրականացման վերաբերյալ (հենվելով առանձին

դասախոսների զեկույցների վրա) մեկ տարվա կտրվածքով: Առանձին ԿԾ-ին վերաբերող զեկույցը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.

- ԿԾ անցած ուսանողների թվաքանակ
- ԿԾ ավարտած ուսանողների թվաքանակ
- ընդունված ուսանողների թվաքանակ
- դուրս մնացած ուսանողների թվաքանակ
- ԿԾ բաղադրամասերի վարկանիշային բաշխումը
- մեկ ուսանողին բաժին ընկած կրեդիտների քանակ
- վերջնական գնահատականի բաշխում
- ԿԾ ավարտելու համար անհրաժեշտ ժամաքանակի բաշխում
- ուսանողների և դասավանդողների հարցումների արդյունքները, որոնք մասնավորապես վերաբերում են դասավանդման որակին և մեկ դասընթացի բաղադրամասի ժամաքանակի գնահատմանը
- գիտական-մանկավարժական հանձնաժողովի կարծիքները ԿԾ-ի, դասընթացների տաբեր ցուցանիշների և հնարավոր ուղղումների վերաբերյալ:

Նմանատիպ վերլուծությունները կատարվում են յուրաքանչյուր տարվա մինչև մայիսի 31-ը (նախորդ ուսումնական տարվա վերաբերյալ): Գործընթացի արդյունավետության ապահովման համար ինստիտուտում առկա է բոլոր ստորաբաժանումների համար հասանելի վիճակագրական տվյալների էլեկտրոնային հարթակ: Կիրառվում է Գնահատման և որակի ապահովման կառույցի կողմից հաստատված ընդհանուր ձևաչափ, որը պարունակում են հետևյալ բաժինները.

- ԿԾ ուժեղ կողմերը
- ԿԾ թույլ կողմերը
- ԿԾ իրականացման ընդհանուր որակական գնահատումը (անբավարար, բավարար, լավ, շատ լավ, գերազանց)
- ԿԾ հնարավորությունները
- ԿԾ սպառնալիքները
- ԿԾ գերազանց պրակտիկաները (ուսուցիչների, ուսանողների և մյուսների կողմից արձանագրված պրակտիկաները, որոնք գերազանց են համարվում ԿԾ-ի համակարգողի կողմից և ընդունվում են որպես ուղեցույց մյուս դասավանդողների և ուսանողների համար)
- մեկնաբանությունները
- բարելավման առաջարկություններ հաջորդ ուսումնական տարվա համար (միջոցառումներ, որոնք ԿԾ համակարգողը կարևոր է համարում խթանելու համար ԿԾ -ի արդյունավետ իրականացումը՝ հաշվի առնելով ցուցանիշները և կատարված գնահատումը)
- նախորդ տարում առաջարկված բարելավման գործողությունների մշտադիտարկում
- հավելյալ տեղեկատվությամբ ֆայլեր:

Նկատի ունենալով առաջավոր փորձ՝ ԳՊՄԻ-ի ՈԱԿ-ը նպատակահարմար է գտնում FISH-BONE դիագրամի միջոցով կատարել ԿԾ-ի գնահատում և ՈԱ: Վերոնշյալ դիագրամը վերլուծության տարրերի վերհանման դիագրամ է:

ԿԾ-ի գնահատման համար կիրառվում է լավագույնս մշակված մեկ գործիք ևս՝ **դասավանդման և ուսումնառության գնահատման հարցախույզը,** որը ներկայացնում ենք ստորև

Inquérito Pedagógico

Դասավանդման և ուսումնառության գնահատման հարցախույզ

Os inquéritos pedagógicos são uma ferramenta crucial na monitorização da qualidade dos cursos do IPLeiria. A sua opinião é importante e será tida em conta em reformulações futuras.
Por favor, classifique os itens abaixo numa escala de (1) "Nada satisfatório" a (5) "Muito satisfatório". Se entender que não reúne condições para responder a alguma questão, selecione "NA" (Não Aplicável).

Դասավանդման և ուսումնառության գնահատման հարցախույզը կարևոր գործիք է համալսարանի ծրագրերի որակի ապահովման հարցում: Ձեր կարծիքը շատ կարևոր է և կօգտագործվի հետագա բարելավման համար:
Խնդրում ենք գնահատել ներքոհիշյալ ասպեկտները 1-5 միավորանոց սանդղակով՝ 1. «Շատ դժգոհ,» 5. «Շատ գոհ»: Եթե կարծիք չունեք կամ հարցը կիրառելի չէ, ընտրեք Ոչ կիրառելի (NA) սյունակը:

	1	2	3	4	5	NA Ոչ կիրառելի
Avaliação do funcionamento da Unidade Curricular (UC). ***Ուսումնական ծրագրի գնահատում***						
1- Posicionamento da UC no plano de estudos. **Ուսումնական ծրագրի համարժեքությունը ուսումնառության պլանին**						
2- Adequação do volume de trabalho ao número de ECTS. **Ծանրաբեռնվածության և կրեդիտների համապատասխանությունը**						
3- Recursos físicos (salas de aula, laboratórios, oficinas). **Սարքավորումներ և ֆիզիկական հարմարություններ (լսարաններ, լաբորատորիաներ, ստորաբաժանումներ)**						
4- Adequação do número de alunos em aula. **Կուրսերում ուսանողների թվաքանակի համապատասխանությունը**						
5- Articulação das várias componentes da UC (teórica e prática). **Ուսումնական ծրագրի տարբեր բաղադրիչների**						

(տեսական և գործնական) բաշխվածությունը						
6- Adequação dos materiais e bibliografia. *Ուսումնական նյութերի և առաջարկվող մասնագիտական գրականության* համապատասխանությունը						
7- Adequação dos métodos e critérios de avaliação. Գնահատման մեթոդների և չափանիշների համապատասխանությունը						
8- Apreciação global do funcionamento da UC. Ուսումնական ծրագրի ամբողջական գնահատումը						
Avaliação do desempenho pedagógico do docente. *Դասախոսական կազմի մանկավարժական կատարողականի գնահատումը*						
1- Organização e empenho na lecionação das aulas de modo a promover o interesse e participação dos estudantes. Ուսանողների հետաքրքրությունը և մասնակցությունը խթանելու նպատակով դասավանդման կազմակերպումը և հանձնառությունը						
2- Clareza e segurança no discurso e na resposta a questões. Դասախոսության իրականացման մատչելիությունը և հարցերին պատասխանելու վարպետությունը						
3- Cumprimento do programa da UC. Ուսումնական ծրագրի իրականացումը						
4- Disponibilização atempada dos materiais e bibliografia. Նյութերի և մասնագիտական գրականության ժամանակից շուտ տրամադրումը						
5- Cumprimento dos métodos e dos critérios de avaliação. Գնահատման մեթոդների և չափանիշների իրականացումը						
6- Disponibilidade para apoiar os estudantes. Ուսանողներին աջակցելու կարողությունը						
7- Apreciação global do desempenho do docente. Դասախոսների կատարողականի ընդհանուր գնահատումը						
Comentários *Մեկնաբանություններ*						

Առանձին կարևորություն ենք տալիս

- **<u>որակի ապահովման ցանցի (network)</u>** բարելավման հարցերին, մասնավորապես ամբիոնի որակի պատասխանատուների գործառույթների հստակեցմանը և պաշտոնի նկարագրի ստեղծմանը: Այն խնդրի առնչությամբ ևս բավական հաջողված կարելի է համարել Լիբերայի պոլիտեխնիկական ինստիտուտի փորձը: IPL-ի ՈԱ ուղեցույցում ամրագրված է որակի ապահովման գործընթացում բոլոր ստորաբաժանումների, կառուցվածքային միավորների պարտականությունները: Նման մոտեցումը, ինչպես նաև բուհի բոլոր ստորաբաժանումների համար հասանելի վիճակագրական, տեղեկատվական տվյալների էլեկտրոնային հարթակի առկայությունը հնարավոր են դարձնում ռեսուրսների նվազագույն կիրառումով իրականացնել գնահատման, խորհրդատվական, մշտադիտարկման և բարելավման գործընթացները: Այս համատեքստում, կարծում ենք, որ արդեն իսկ հնարավոր և տեսանելի է դառնում ԳՊՄԻ ՈԱ ուղեցույցի բարելավումը:
- **<u>Որակի ապահովման ներքին համակարգի մշտադիտարկման իրականացման</u>** և անընդհատ բարելավման հնարավորության ապահովումը: IPL-ի Գնահատման և որակի ապահովման կառույցի

գործունեության մշտադիտարկման գործիք է դիտվում տարեկան հաշվետվությանը, որի միջոցով ներկայացվում են կատարված աշխատանքները՝ ներառելով հետևյալ բաժինները.

ա. Որակի ապահովման ներքին համակարգի փաստաթղթեր-որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկ, համապատասխան հրամաններ, կանոնակարգեր և այլն,

բ. Գնահատման հաշվեկշիռ/հավատարմագրման ընթացակարգեր-Բարձրագույն կրթության գնահատման և հավատարմագրման պորտուգալական գործակալության կողմից ներկայացված պահանջներին համապատասխան ԿԾ-ների հավատարմագրման գործընթացների գնահատում՝ ուժեղ կողմեր, թույլ կողմեր, սպառնալիքներ, առաջարկություններ բարելավման համար:

գ. Ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում իրականացված գործընթացների մասին հարցումների վերլուծություն,

դ. ԿԾ-ների, դասընթացների գնահատման, տարեկան հաշվետվությունների մշակման գործընթացի վերլուծություն,

ե. Որակի ապահովման ներքին համակարգի այլ միջոցառումներ:

Իսկ հաստատության ծրագրերը և գործունեության տարեկան հաշվետվությունները, որոնք հաստատում են կազմակերպական գործունեության և ռազմավարական պլանավորման միջև կապը և վերահսկում են սահմանված նպատակների հետ համապատասխանությունը, գնահատման և մշտադիտարկման հավելյալ ձևեր են:

Այս ամենով հանդերձ առաջիկա ժամանակահատվածում ԳՊՄԻ ՈԱԿ-ը իր լուրջ գործունեությունը տեսնում է իհարկե առաջին հերթին բուհի ՌԾ-ի և փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների միջնաժամկետ ծրագրին և ժամանակացույցին համապատասխան գործելը: Իսկ վերջինիս առումով կենտրոնի հիմնական խնդիրներն են.

- Մշակել և կիրարկել արտաքին շահակիցների մասնակցությունը խրախուսող քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ:
- Մշակել ՈԱ համակարգի գործունեության մշտադիտարկման և վերլուծության մեխանիզմներ և ապահովել որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուների մասնագիտական զարգացման շարունակականությունը:
- Բարելավել բուհում իրականացվող հարցումների և տվյալների հավաքագրման գործընթացը՝ ներդնելով դրանց իրականացման հավաստիության մեխանիզմներ:

Առաջիկայում ԳՊՄԻ-ի որակի ապահովման կենտրոնի գործունեությունը միտված կլինի ներքին և արտաքին գնահատման գործողությունների միջև փոխադարձ կապի ապահովմանը՝ հիմնված որակի բարձր չափանիշների իրագործման սկզբունքի վրա: